

ԱՌԱՋՆՈՐԴԻ ՏԱՐԵԿԱՆ ԿՈՉ



ՄԵՐ ԺՈՂՈՎՈՐԴԻ ԱԲԵԼԻ ԼԱՎ ԱՊԱԳԱՅԻՆ ՀԱՄԱՐ ՄԻԱՍԻՆ ԱՇԽԱՏԻՆՔ

Երբ այս նամակը ստանաք, ես որպես Հայ Առաքելական Եկեղեցու Ֆրանսիայի թեմի առաջնորդ, իմ չորրորդ տարին աւարտած պիտի ըլլամ: Աստծոյ շնորհիւ մենք բոլորս միասին կարողացանք աշխատիլ: Թեմական Խորհուրդ, հոգեւորականներ, ծխական խորհուրդներ, բարերարներ եւ կամաւորներ, Ֆրանսայի մէջ Հայ Եկեղեցու պահպանման եւ ամրապնդման համար աշխատեցանք: Մեր հետեւողական աշխատանքին շնորհիւ կրօնական, դաստիարակչական, մշակութային եւ ընկերային շօշափելի ծրագիրներ իրագործեցինք: Բայց պէտք է խոստովանին, որ չնայած մեր առաքելութեան եւ մեր ծրագրերու մէջ ձեռք բերուած բազմաթիւ գեղեցիկ յաղթանակներուն, ինչպէս մեր առաջին ամառնային ճամբարը, մեր առաջին հայկական փողոցային փառատօնը եւ այլն. այս առաջին երեք տարուայ ընթացքին մեծ դժուարութիւն ունեցանք նիւթական միջոցներ հաւաքելու, որ թեմը կարենայ պահել երեք պաշտօնեայ Առաջնորդ մը, Աղիւսանոր Փոխանորդ մը եւ վարչական քարտուղար մը: Մեր ծովերու ուժեղ աջակցութեան, հաւատացեալներու եւ ձեգի պէս հաւատարիմ բարեկամներու զօրակցութեան եւ այս տարի մեր սկսած դրամահաւաքներու շնորհիւ, ես վստահ եմ, որ յաջորդ տարի մենք պիտի կարենանք ստանձնել այդ մարտահրաւերը: Կը փափաքիմ շնորհակալութիւն յայտնել մեր բարերարներուն, կամաւորներուն եւ բոլոր անոնց, որոնք աշխատեցան ձեգի եւ Թեմական Խորհրդի հետ: Առանց այս զօրակցութեան մենք մեր ծրագիրներէն որեւէ մէկը չէինք կրնար իրագործել: Տարուայ վերջաւորութեան ձեգի հասնող այս նամակը, ձեր բարի սիրտերուն կոչ մըն է որ աջակցիք Ֆրանսայի մէջ Հայ Եկեղեցու: Արդեօք կրնա մ վստահիլ ձեզի: Կը խնդրեմ որ առատաձեռն ըլլաք ձեր ներդրման մէջ: Հայ Եկեղեցու Թեմը, տարին միայն մէկ անգամ, իր բոլոր տարուայ գործունէութիւնը զանձատրելու համար ձեզմէ աջակցութիւն կը խնդրէ: Թող Տէրը ողջ աշխարհի մէջ հայ ժողովրդի հետ ըլլայ եւ օրինէ մեզ բոլորիս, որ կը ջանանք ամրապնդել Հայ Եկեղեցին:

Օրհնութեամբ,
+ Վահան Եպս Յովհաննէսեան

2018-Ի ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՄԱԳՆԵՐԸ

ԿՐԹՈՒԹԻՒՆ

- Առաջնորդի եւ հոգեւորականութեան կողմէ Աստուածաշունչի շաբաթական սերտում եւ դասախօսութիւններ :
- Թեմի Նոր աշխատանքներու հրատարակում:
- Մեր դասախօսութիւնները եւ Աստուածաշունչի ուսումնասիրութիւնները համացանցով ներկայացնել:

ՄԱՆՈՒԿՆԵՐ

- Մանուկները թեմի 2018-ի ամառնային առաջին ճամբարէն շատ զոի մնացին:
- Սուրբ Ենուկի Նիւթով ֆիլմի մը ցուցադրումը եւ քննարկումներ:

ԱՌԱՋԻՆ ԱՊՐՈՂ ՏԱՐԵՑՆԵՐ

- Երիտասարդներու, հոգեւորականներու եւ Առաջնորդի կողմէ, արանցին ապրող տարեցներու զատկուայ զամբիղներու յանձնում:

ԸՆԿԵՐԱՅԻՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

5000 հոգիի մասնակցութեամբ, Ֆրանսահայոց Թեմի առաջին Հայկական Փողոցի Փառատօնը Փարիզի մէջ՝ 16.000 եւրօ եկամուտ ապահովեց:

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒՆԵՐՈՒ ԵԿԵՆԵՑԻ

2018, Հայ Առաքելական Եկեղեցու Ֆրանսիայի Թեմի Երիտասարդության գործունեության համար լավ տարի էր: Եկեղեցին սիրող այս երիտասարդներու եւ երիտասարդուհիներու ցանցը, մտաւ իր չորրորդ տարուան մէջ եւ հիմա աւելի շատ գործունեութիւններ կ'առաջարկէ: Ֆրանսայի տարբեր ծովներէն եկած 20 պատուիրակներու խումբը, այս ամառն Օաղկաձորի մէջ տեղի ունեցած Եկեղեցու Երիտասարդական Համաշխարհային Ժողովին, մեր թեմի երիտասարդութիւնը ներկայացուց: Յուլիսին, 90 հայ երիտասարդներ եւ երիտասարդուհիներ մասնակցեցան դէպի Հայաստան ուխտագնացութեան: Անոնք մեր թեմի առաջնորդ, Գերաշնորհ Վահան Եպիսկոպոս Յովհաննեսեանի մատուցած Պատարագին մասնակցեցան եւ ընդունուեցան Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ի կողմէ: Այս խումբը կ'ընդգրկէր նաեւ թեմական Արարատ պարախումբի անդամները, որոնք Երեւանի պատմական օֆերային մէջ հիմնադր ելոյթ մը ունեցած էին: Երիտասարդներու կազմակերպած գործունեութիւններու մաս կը կազմէն մինչեւ ավարտը հայերու Ձատկոյալ գամբիւղի բաշխումը, ինչպէս նաեւ Ցեղասպանութեան նախատակներու յիշատակին համար արեան տուոյթիւնը: Եկեղեցու Երիտասարդներու Կեդրոնական Խորհուրդը կը պաշտպատէ Նոյեմբեր 17, 2018-ին, Լիոնի մայր տաճարին մէջ կայանալիք ամենամայ չորրորդ հանդիպումը:



ԿՐԹԱԿԱՆ ՇՐԱԳԻՐ

Գերաշնորհ Վահան Եպիսկոպոս Յովհաննեսեանի որպէս Առաջնորդ ընտրութենէն ի վեր, թեմի առաքելութեան էական կողմը եղաւ ուսուցումը եւ կրօնական կրթութիւնը: Առաջին երեք տարիներու իր գործունեութիւնը շարունակելով, Առաջնորդ սրբազանը այս տարի նա, տարբեր ծովներու մէջ, Աստուածաշունչի ուսումնասիրութեան շարքաթական դասընթացներ կազմակերպեց: Կրթական նիւթերը ել-գիրերով եւ համացանցի կայքով կը հրապարակուին: Այս տարի նոր գիրք մը լոյս տեսաւ. «ԱՍՏՈՒԱՏՆՈՒՆԻՆՉ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՆԵՑԻ»: Թիւրութեամբ կարդացուող այս գիրքը, Հայ Եկեղեցու մէջ ընդունուած եւ քարոզուած ձեռով Աստուածաշունչը ընթերցողին կը ներկայացնէ: Այս գիրքը գրուած է միջին մակարդակի հայու համար: Ասիկա Հայ Առաքելական Եկեղեցու հաւատքի հիմքերը սորվեցնելու նպատակով թեմի կողմէ հրատարակուելիք ներածական գիրքերու շարքի մը առաջին հատորն է:

ԿՐԹԱԿԱՆ ՇՐԱԳԻՐ

Գերաշնորհ Վահան Եպիսկոպոս Յովհաննեսեանի որպէս Առաջնորդ ընտրութենէն ի վեր, թեմի առաքելութեան էական կողմը եղաւ ուսուցումը եւ կրօնական կրթութիւնը: Առաջին երեք տարիներու իր գործունեութիւնը շարունակելով, Առաջնորդ սրբազանը այս տարի նա, տարբեր ծովներու մէջ, Աստուածաշունչի ուսումնասիրութեան շարքաթական դասընթացներ կազմակերպեց: Կրթական նիւթերը ել-գիրերով եւ համացանցի կայքով կը հրապարակուին: Այս տարի նոր գիրք մը լոյս տեսաւ. «ԱՍՏՈՒԱՏՆՈՒՆԻՆՉ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՆԵՑԻ»: Թիւրութեամբ կարդացուող այս գիրքը, Հայ Եկեղեցու մէջ ընդունուած եւ քարոզուած ձեռով Աստուածաշունչը ընթերցողին կը ներկայացնէ: Այս գիրքը գրուած է միջին մակարդակի հայու համար: Ասիկա Հայ Առաքելական Եկեղեցու հաւատքի հիմքերը սորվեցնելու նպատակով թեմի կողմէ հրատարակուելիք ներածական գիրքերու շարքի մը առաջին հատորն է:



ԼՈՅՍԻ ԱՐԲԻՐԸ

Հայ Եկեղեցին դարեր շարունակ մեր ժողովուրդի համար լոյսի աղբիւր եղած է: Բոլորի մասնակցութեամբ եկէ՛ք այս փայլը շարունակական դարձնելը որ մեր զաւակները անկէ շարունակեն օգտուիլ:





ՄԵՐ ՄԱՆՈՒԿՆԵՐԸ

2018-ի թեմի ծրագրերը շատ առումներով մանուկներու կը վերաբերին: Տարուայ սկիզբը լոյս տեսաւ յատուկ աղօթքի գիրք մը, որու շնորհիւ ծնողները կրնան իրենց փոքրիկներին հայկական աստուղական աղօթքները սորվեցնել: Գերաշնորհ Վահան Եպիսկոպոս Յովհաննեսեանի ուղղակի հսկողութեան տակ, մեր եկեղեցին այս տարի առաջին անգամ մանուկներու համար ամառնային ճամբար մը կազմակերպեց: 8-էն մինչեւ 16 տարեկան 35 մանուկներ, շաբաթուայ մը քննարկի հաւաքուեցան Լա Նեյիերի (Ռոն) գեղեցիկ ճամբարի մէջ, մասնակցեցան հետաքրքրական գործունէութիւններու, ունեցան պատմութեան, հաւատքի եւ մշակոյթի ամենօրեայ դասընթացներ եւ զբօսանքի, պտուղի, լողալու, պարի եւ երգելու հաճելի պահեր: Ճամբարի ծրագիրը կ'ընդգրկէր նաեւ առաւօտեան եւ երեկոյեան կարճ աղօթքներ եւ խորհրդածութիւններ, որոնց քննարկի մեր մանուկները Աստուծոյ մեզի հանդէպ ունեցած անվերապահ սիրոյ մասին տեղեկացան եւ հայկական աստուղական աղօթքներ եւ սաղմոսներ սորվեցան: Ասիկա մեր մանուկներուն համար, իրարու հանդիպելու, իրենց ծագման մասին անելին սորվելու եւ իրենց հաւատքը ամրապնդելու հիւսնայի կախածեռնութիւն մը եղաւ:

ԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՈՐԾ

Աստուածաշունչի մէջ օգտագործուող եկեղեցի բառը կը նշանակէ հանդիպում կամ ժողովուրդի թով թովի հաւաքուիլը: Ուրեմն, Ֆրանսիայի թեմին համար հայ համայնքի եւ ժողովրդի ամրապնդման համար աշխատիլը շատ կարեւոր է: Այս հեռանկարով Թեմը բոլոր հայկական կազմակերպութիւններու եւ Հայաստանի Հանրապետութեան Ֆրանսայի Դեսպալատան հետ սերտօրէն կը համագործակցի: Նաեւ Ֆրանսայի հայերը իրարու մերձեցնելու համար Թեմը դասախօսութիւններ, ֆիլմերու գիշերներ, ճաշկերոյթներ եւ այլն կը կազմակերպէ: Ֆրանսայի հայ



համայնքի պատմութեան մէջ առաջին անգամ է, որ Ֆրանսահայ եկեղեցւոյ Թեմը Փարիզի մէջ կազմակերպեց, Հայկական Փողոցի Փառատոն մը, որ շատ յաջող անցաւ: Վաճառուած սննդամթերքի եւ փճակահանութեան տոմսերու քանակէն եւ տաղարարներու վարձակալներու հաշիւներէն կարելի է գրեթէ յստակօրէն հետեցնել թէ Փառատոնին շուրջ 5000 հոգի մասնակցեցաւ: Փառք Աստուծոյ, փառատոնը ոչ միայն ժողովուրդներու մերձեցման ծառայեց, այլեւ արիւղ եղաւ Թեմի համար անհրաժեշտ եկամուտի մը գոյացման: 2018-ի Ա. Հայկական Փողոցի Փառատոնը շուրջ 16.000 Եւրօ եկամուտ ապահովեց Թեմին:



ՇԱՐԱԿԱՆ

« Եկայք շինեսցուք տուր զխորանս լուսոյ ... Թագաւոր Երկնաւոր գեկեղեցին քո անշարժ պահեաւ: »



Մարտահրաւիրները Հանաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Ֆրանսահայոց Թեմին

Դարէ մը ի վեր, մեր Հայ Առաքելական Եկեղեցին սփիւռքի մէջ իր պատմական հողերէն աւելի շատ հաւատացեալներ ունի: Այս խոր փոփոխութիւնը ունի հետեւեանքներ: Այս տոր իրավիճակը հաշուի առնելով, յարմարեցում եւ բարեշրջում պէտք է: Պատմականօրէն մեր եկեղեցին միշտ հայ ազգի պահպանման գլխաւոր սատարը եղած է, այնքան որ ան յաճախ միակ իշխանութիւնն էր, երբ երկիրը կը գտնուէր օտար տիրապետութեան տակ: Այսօր ալ, ան իր հովուական առաքելութիւնէ դուրս, կը մնայ մեր ժողովրդի հիմնասիւններէն մէկը: Այս պատճառաւ եկեղեցւոյ դերը Հայաստանի եւ սփիւռքի մէջ նոյնը չէ: Ուր ալ ըլլան, Հայերու համար ամենակարեւոր ուղենիշը մեր եկեղեցին է: Ան նաեւ տարբեր պետութիւններու իշխանութիւններու կողմէ ճանաչուած հաստատութիւն է: Ֆրանսայի Հայ Առաքելական Եկեղեցւոյ կազմակերպութիւնը հիմնուած է Ֆրանսիայի Թեմի վրայ, որու ծիրին մէջ կան տարբեր ծովեր, որոնք 1901-ի եւ 1905-ի օրէնքներու համաձայն կազմուած են: Պէտք է նշել, որ Տեղապալանութենէ վերջ վերապարծներու ցրուածութեան պատճառաւ, ծովերը Թեմէն շատ աւելի առաջ, իրարմէ անկախ կերպով ձեւաւորուած են: Այսօր Թեմը գտնուել կը համակարգէ: Զահանաները, իրենց պաշտօնավարման ընթացքին հովուական պատգամը կը տարածեն, իսկ աշխարհականները յանձն կ'առնեն միջոցներ ապահովել, որ անոնք աշխուժօրէն կարենան մասնակցիլ եկեղեցւոյ կենսքին: Թեմական հորհուրդը այս տարբեր գործօնները նկատի ունենալով, Առաջնորդ Գերաշնորհ Վահան Եպիսկոպոս Յովնաննեսեանի հետ, իր աշխատանքային ծրագիրը կը մշակէ: Թեմի հիմնական նպատակներն են՝ հովուական ուղերձը տարածել, կրօնական կրթութիւնը զարգացնել, Ֆրանսայի Հայ Առաքելական Եկեղեցւոյ մեր առանձնապատկութիւնը պահպանել, ծովերու հետ եւ ծովերու միջեւ կապը զարգացնել, նախահաշիւ մը եւ անոր եկամուտի աղբիւրները պարտաստել եւ աջակցիլ կրթական գործողութիւններուն: Մենք ոչ անհատական, հաւաքական աշխատանքով կրնանք հասնիլ այդ յաւակնուտ նպատակներուն:



ԱՐԴԵՐԵՐ ԳԻՏԷ՞Ք ԹԵ՛

- Հայ եկեղեցին եպոպայի եւ Ֆրանսայի ամենահին հայկական կազմակերպութիւնն է, որ պահպանած է հայկական հաւատը, ինքնութիւնը եւ մշակույթը:
- Հայոց Թեմը պաշտօնական կապն է ու կը միատրոյ մեր եկեղեցին այլ թոր եկեղեցիներու եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հետ:
- Թեմը, Սուրբ Էջմիածնի հետ մեր պաշտօնական կապն է: Այդ պատճառաւ, մեր եկեղեցիներու եւ հոգեւորականութեան վերահսկողութիւնը կը կատարել, որպէսզի անոնք Հայ եկեղեցւոյ օրէնքներուն եւ աւանդութիւններուն հաւատարիմ մնան:
- Ֆրանսայի Հայոց Թեմը 24 եկեղեցի եւ նոր կազմուած աւելի քան 10 եկեղեցական համայնք ունի:
- Թեմը բոլոր այս ծովերուն եւ համայնքներուն առաքելութենէն ու ծառայութիւններէն պատասխանատու է եւ վերահսկել գտնուել:
- Ֆրանսայի Հայոց Թեմը, Ֆրանսայի մէջ կամ անոր սահմաններէն դուրս գտնուող ոչ մէկ կազմակերպութենէ, նաեւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնէ, Նիւթական ոչ մէկ աջակցութիւն չի ստանար:
- Թեմը մասնակցներու, երիտասարդներու ուղղուած իր ծրագիրները, կրթութեան, կրօնական դաստիարակչութեան ինչպէս նաեւ հասարակական յարաբերութիւններու իր ծրագիրները իրագործելու եւ նոր ծրագիրներ ստեղծելու համար Նիւթական օգնութեան պէտք ունի:

ՁԵՐ ՆԻԹԱԿԱՆ ՆԵՐՂՈՒԽԸ

Նոր Տարուայ 2019-ի առթիւ, դուք կրնաք ձեր Նիւթական Ներդրումը կատարել վերը նշուած ծրագրերու իրականացման համար: Կը խնդրենք ձեր նուիրատուութիւնները "Diocèse de France de l'église arménienne" անուամբ ձեւակերպել եւ դրկել Diocèse de France de l'église arménienne - 15 rue Jean Goujon, 75008 Paris հասցէին: Շնորհակալ ենք ձեր Նիւթական աջակցութեան համար:

